



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *Բնտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում*

Դաստիարակ՝ *Միրարիի Բաղդասարյան*

Մանկապարտեզ՝ *«Մեղրիի համայնքի մանկապարտեզ Լեհվազի մասնաճյուղ» ՀՈԱԿ*

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն.....	2
2. Գլուխ 1. Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը.....	5
3. Գլուխ 2. Հետազոտության ընթացքը.....	7
4. Եզրակացություն.....	13
5. Գրականության ցանկ.....	14

Ներածություն

Հանգուցային բառեր. ինտեգրում, ինտեգրված դաս, կրթական տեխնոլոգիաներ, դրդապատճառ, առաջատար, օժանդակ, հակասություն, միջառարկայական կապ:

Այսօր Հայաստանում, ինչպես և ողջ աշխարհում, տեղի են ունենում կրթական ոլորտի փոփոխություններ, որոնց նպատակն է կրթությունը մոտեցնել իրական կյանքին: Նոր պահանջներ են առաջադրվել կրթության կազմակերպման եղանակներին ու ձևերին, դրա բովանդակությանը: Փոխվել են կրթության նպատակը, խնդիրները, ուսուցչին ներկայացվող պահանջները:

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է ապահովել երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Այս նպատակին հասնելու ուղիներից է մանկապարտեզում ուսումնառությունը ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելը:

Նախադպրոցական կրթության մեթոդական նորացման կարևոր ուղղություններից է ինտեգրված պարապմունքների անցկացումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացում: Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև և կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ինտեգրված պարապմունքը ուղղված է որոշակի թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ: Ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս դաստիարակը կարող է օգտվել ինտելեկտուալ քարտի մեթոդից: Ինտելեկտուալ քարտը որոշակի թեմայի բովանդակային ուսումնասիրման կառուցվածքային, տրամաբանական սխեմա է, որտեղ արտացոլվում են հանգուցային

հասկացությունը կենտրոնում, իսկ օժանդակ հասկացությունները՝ հանգուցային հասկացության շուրջ:

Ասա՛ ինձ, և ես քեզ կլսեմ

Ցույց տո՛ւր ինձ, և ես կհիշեմ

Մասնակից դարձրո՛ւ, և ես կհասկանամ:

Ինտեգրված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագույն բնագավառներից մեկն է, որը կապված է նախկինում անհամեմատելի մասերի միավորման հետ: Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում: Ինտեգրման գործընթացի էությունը համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի մեջ որակական փոփոխությունն է: Մանկավարժության ինտեգրման խնդիրները ուսումնասիրվում են տարբեր բնագավառներում՝ բազմաթիվ հետազոտողների աշխատանքներում: Վ.Վ. Կրասնկու, Ա.Վ. Պետրովսկու, Ն.Ֆ. Թալինյանի ստեղծագործություններում հստակ երևում է այլ գիտությունների հետ մանկավարժության ինտեգրման խնդիրների կապը: Գ. Դ. Գլեյզերը և Վ. Ս. Լեդնը բացահայտում են կրթության բովանդակության ինտեգրման ուղիները: Լի Նովիկովայի և Վ.Կ. Կարոլովսկու ստեղծագործություններում բացահայտվում են երեխայի վրա կրթական ազդեցությունների ինտեգրման խնդիրները: Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ: Այն առաջատար է առաջադիմության զարգացման մեջ, որոշելով դասընթացի բովանդակությունը, ձևերը և մեթոդները: Ուսուցման կազմակերպման մեջ ինտեգրումը նկարագրվում է Ս. Մ. Գապենկովի և Գ. Ֆ. Ֆեդորեթսի գրվածքներում:

Հետազոտողները ինտեգրումը հասկանում են մանկավարժական գործընթացի զարգացման կարևորագույն բնագավառներից մեկը, որը կապված է անհամեմատելի մասերի միավորման հետ: Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում, այնպես էլ նոր համակարգի շրջանակներում: Հավատարիմ մնալով ընտրված մեթոդաբանական դիրքորոշումներին, գիտնականները

բացահայտում են մի շարք հասկացություններ՝ ինտեգրման գործընթաց, ինտեգրման սկզբունք, ինտեգրման գործընթացներ, ինտեգրման մոտեցում:

Հատուկ մանկավարժության մեջ ինտեգրման մոտեցումը խորը բնույթ է կրում: Ի. Ն. Նազարովան այդ հայեցակարգը սահմանում է հետևյալ կերպ. «Առավել ընդհանուր պայմանների առընչությամբ հատուկ կրթություն տերմինը՝ «ինտեգրում», վերաբերում է գործընթացին և արդյունքում ստեղծվում է մի վիճակ, որում հատուկ կարիքներ ունեցող մարդիկ և այլ համայնքի անդամներ, ովքեր հաշմանդամ են և չեն անտեսվում կամ մեկուսացվում նրանց ինտելեկտուալ, զգայական ոլորտները: Նրանք մասնակցում են բոլոր տեսակների ու ձևերի սոցիալական կյանքին և մյուսների պես ունեն հավասար իրավունքներ: Ինտեգրման գործընթացը կրթական համակարգի բոլոր մակարդակներում իրական է, չի սահմանափակում հատուկ կրթություն ունեցող երեխաների, դեռահասների, երիտասարդ մարդկանց հնարավորությունները հատուկ ուսումնական հաստատություններում: Նրանք ընդհանուր ձևով կրթություն ստանալու, զարգանալու, վերապատրաստվելու հնարավորություն ունեն»:

Համանման սահմանում է տալիս նաև Մ. Նիկիտինը. «Համաձայն ինտեգրման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց, հատուկ մանկավարժությունը վերաբերում է գործընթացին ինտեգրվելու այդ անձանց, կյանքի բոլոր ոլորտներում հանդես գալու հասարակության հավասար անդամներ: Ինտեգրված ուսուցման տերմինը օգտագործվում է գիտնականներ՝ Լ. Ս.Վոլկովայի, Ն.Ն. Մալոֆենի, Ն.Ս. Նազարովայի և ուրիշների հատուկ կրթության ոլորտին վերաբերող աշխատանքներում: Դրա հետ մեկտեղ, այդ տերմինը օգտագործվում է ժամկետով ինտեգրված ուսուցման և կրթության, ինտեգրված կրթության ոլորտում: Սակայն, հեղինակները դնում են բովանդակային նման իմաստ: Վերլուծելով մոտեցումներն ինտեգրման և ինտեգրված կրթության, հատուկ կրթության գրավոր շրջանակներում կան մենագրական, ընդհանուր մանկավարժության, սոցիոլոգիայի կրթության ուսումնասիրություններ նվիրված այս թեմային. Դ. Վ. Շամսուդինովան օգտագործում է սոցիալ-մշակութային ինտեգրման հայեցակարգը, որի բովանդակությունը օգտագործվում է հատուկ կրթության բնագավառում:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) պարապմունքի հետևյալ տեսակները.

- միջառարկայական - (երկու առարկաներ միջև՝ օր. մաթեմատիկա-ապլիկացիա)
- բազմառարկայական -(երկուսից ավել առարկաներ միջև՝ օր. մաթեմատիկա-ապլիկացիա-երաժշտություն)

Հետազոտության նպատակը

Ինտեգրված պարապմունքների ընթացքում իրականացնել լտարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորման, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրություն:

Թեման՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումներ և նկարչություն

Նպատակը.

. Պատկերացում ձևավորել թվաբանական պարզ խնդրի վերաբերյալ, սովորեցնել կազմել գումարման խնդիրներ, ճիշտ ձևակերպել խնդրի պատասխանները:

. Ամրապնդել և ճշտել նախկինում ձեռք բերած գիտելիքները 2 և 3 թվերի կազմությունը, հաշիվ՝ 1-3 թվերի սահմանում:

. Ամրակայել պատկերացումներ՝ հիմնական գույների մասին, սովորել հիմնական գույների միջոցով ստանալ բաղադրյալ գույներ:

. Չարգացնել հետաքրքրասիրությունը, գեղագիտական ճաշակը, տրամաբանական մտածողությունը, քերականական ճիշտ և կապակցված խոսքը:

. Ձևավորել համագործակցային հմտությունները:

Վարկած

Մանկապարտեզում ժամանակակից պահանջներին համապատասխան պարապմունքի կազմակերպումը կնպաստի պրակտիկ գործունեության կատարելագործմանը, բովանդակային նոր մոտեցմանը, մեթոդների կիրառմանը:

Հետազոտությունն իրականացնում ենք հետևյալ նպատակով՝

Ձևավորել երեխայի հոգեկան գործընթացը՝ հիշողություն, ուշադրություն ,մտածողություն, երևակայություն, խոսք, ապահովել միջառարկայական կապերը տարբեր մեթոդիկաներից, կիրառվում է նաև ինտելեկտուալ քարտի մեթոդը:

ԳԼՈՒԽ.1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ինտեգրված պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված պարապմունքները կարևորում են գործունեության այն ձևերը որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Ինտեգրված ուսուցումը ենթադրում է տարբեր մեթոդիկաների միջև կապերի ստեղծում, այսինքն, որևէ թեմա ուսումնասիրելիս ամփոփվում են տարբեր մեթոդիկաներից հարցեր և երեխաները հասկանում են տարբեր մեթոդիկաների միջև գոյություն ունեցող կապերը: Երեխաների առաջարկվում են հետաքրքիր թեմաներ կենսական հարցերի շուրջ: Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ: Խաղի տարրը ինտեգրված դասի անբաժանելի մասն է :

Ինտեգրված դասի հիմնական խնդիրները

Երեխաների կողմից շրջապատող աշխարհի պատկերի ամբողջական ընկալման ձգտումը.

Նախադպրոցականների մոտ տեղեկատվության ինքնուրույն զարգացման և դրա օգտագործման հմտությունների ձևավորում

Դաստիարակը ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս հաշվի է առնում հետևյալը.

- թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին,
- ընտրված թեման նպաստում է երևակայության և ստեղծագործական մտածողության թանձանք,

- ընտրված թեման անհրաժեշտ է անցնել այնպես, որ ապահովվի բոլոր երեխաների մասնակցությունը,
- երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու և որոշակի պատասխասխանատվություն կրելու,
- երեխաները կարողանան ավելացնել իրենց գիտելիքներն ու փորձը՝ միջավայրի, առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

<<Ինտեգրված պարապմունքները իրենց բազմազանությամբ և միօրինակությամբ ապահովում են երեխայի ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև>>:

Լալա Մմբատյան <<Նախաշավիկ>> 2015թ

<<Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու իր հատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան, քան նրանց այդ ունակությունը մերով փոխարինելու փորձը>>:

Ժան Ժակ Ռուսո <<Նախաշավիկ 2>> 2016թ

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ստեղծվել են համապատասխան մանկավարժական պայմաններ, իրականացվել է որոշակի մանկավարժական աշխատանք, որը նպաստել է մաթեմատիկական գիտելիքների առավել խորը յուրացմանը՝ նկարչության պարապմունքի միջոցով: Հետազոտական աշխատանքի իրականացման համար օգտվել են գնման, դիտման, զրույցի, ինչպես նաև կիրառել են ինտերակտիվ մեթոդներ՝ մտազրոհ, ենթախմբերի բաժանում, հարցեր հարցադրումներ:

Պարապմունքի պլանը

Անհրաժեշտ նյութեր

- Սև մատիտ, ջրաներկ, նկարչական թուղթ, փորձաթուղթ, 1-3 թվանշաններով քարտեր
- Ցուցադրական նյութ՝ պարզ խնդիրների տեսքով
- Բաշխիչ նյութեր՝ երեխաների թվով երկգծանի քարտեր, թվային պատկերներ՝ 1,2,3
- Գունավոր ծաղիկներ՝ ըստ խմբերի քանակի, խաղ-մրցույթի համապատասխան պատասխաններին համապատասխան

Պարապմունքի ընթացքը

Խթանման փուլ /3-5ր./

Երեխաները դաստիարակի օգնությամբ վերհիշում են հիմնական գույները:

Դաստիարակ- Նայե՛ք ձեր շուրջը և ասացե՛ք՝ ի՞նչ հիմնական գույների առարկաներ եք տեսնում:

Իսկ ի՞նչ առարկաներ կան ոչ հիմնական գույների:

Նշե՛ք երկու առարկա, որոնք կարող են լինել միայն կապույտ գույնի:

Նշե՛ք երեք առարկա, որոնք կարող են լինել միայն կարմիր գույնի:

Նշե՛ք մեկ առարկա, որը լինում է միայն դեղին գույնի:

Ի՞նչ տեղի կունենա, եթե խառնենք երկու հիմնական գույներ:

Իմաստի ընկալում

Խումբ բաժանվում է ենթախմբերի 4-6 հոգանոց: Յուրաքանչյուր ենթախումբի տրամադրել սև մատիտ, ջրաներկ, նկարչական թուղթ, փորձաթուղթ:


Առաջարկվում է հիմնական գույներին ավելացնել առաջարկվող գույնը և փորձաթղթի վրա ստանալ նոր գույն: Հիմնական և նոր ստացած գույներն օգտագործելով՝ նկարել ծաղիկներ, կազմել պարզ գումարման խնդիրներ:

Ամբողջ խումբը ստանում է նույն հանձնարարությունը:

-Ունենք մեկ հիմնական գույնի ծաղիկ, դրան գումարում եք ևս մեկս պիտակ ծաղիկ:

-Մտածել՝ քանի՞ տարբերակ կարելի է ստանալ:

(Անհրաժեշտության դեպքում հարկավոր է հուշել երեխաներին՝ աշխատել ոչ միայն գումարել ծաղիկները, այլև ուշադրություն դարձնել գույների խառնուրդին:)



Երեխաները նկատում են, որ խմբի անդամները՝ օգտագործելով նույն գույները, ստանում են տարբեր երանգի ծաղիկներ: Նրանք պետք է կարողանան ոչ միայն ճիշտ կատարել գումարման գործողությունները, այլև փորձեն մեկնաբանել գունային երանգի ստացման պատճառները և բացատրեն, թե ինչու՞ է այդպես ստացվում:


Հնչում է դաստիարակի հաջորդ հարցը.

-Ինչպե՞ս բացատրել ստացված երանգի տարբերությունը:

Հարցի 2-3ր քննարկում են ենթախմբերով և ենթախբից որևէ մեկը պատասխանում է հարցին: Պետք է բոլոր երեխաները արտահայտվեն: Ամփոփվում է երեխաների պատասխանները: Գրատախտակին ամրացվում են առանձին քարտերով նոր խնդիրներ՝ երկու տարբեր գույնի ծաղիկների համադրությամբ:

Օրինակների քանակը պետք է շատ լինի, որպեսզի երեխաներն ունենան ընտրության հնարավորություն: Երեխաները տեղերում կազմում են առաջադրված խնդիրը, ստանում գումարման պատասխանը և գունային համադրումը:

Ֆիզկուլտ-դադարից հետո կատարվում է աշխատանք բաշխից նյութերով: Երեխաները տեղերում ընտրում և բարձրացնում են այն թվանշանը, որը համապատասխանում է ցուցադրած խնդրի պատասխանին: Դաստիարակը գրատախտակին հերթով ցուցադրում է նկարներով քարտեր, իսկ երեխաները տեղերում բարձրացնում են թվապատկերները:



-Ի՞նչ էք կարծում, ին՞չ թվից են կամված երկու և երեք թվերը:

Երեխաները տեղերից ցուցադրում են հնարավոր տարբերակները:

Անցկացվում է խաղ- մրցույթ որի ընթացքում խմբերին մեկական մեծ քարտ, որի վրա նկարված են պարզ խնդիրների գծապատկերներ: Երեխաներն ըստ գույների գուշակում են տրված խնդրի լուծումը: Ենթախմբերն արագ քննարկում են և ենթախմբից որևէ մեկը

ցույց է տալիս համապատասխան գույնի ծաղիկ: Հաղթում է այն խումբը, որը արագ գտնում է պատասխանը:

Կշռադատման փուլում պարզեցի թե՛ ինչ զգացողություններ առաջացան երեխաների մեջ կարմիր, կապույտ և դեղին գույները օգտագործելուց, ինչ նոր բան սովորեցին :

Դիտարկում

Դաստիարակը իր առջև նպատակ էր դրել ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով ինտեգրել տարրական մաթեմատիկայի և նկարչության պարապմունքը: Պարապմունքի թեման բխում էր ծրագրային պահանջներից , նպատակները և խնդիրները հստակ ձևակերպված էին: Պարապմունքի տարբեր բաժինները տրամաբանորեն շաղկապված էին միմիանց: Ճիշտ ընտրված մեթոդները, տեխնոլոգիաները՝ փոխգործուն, խաղային, ցուցադրման, բացատրման օգնեցին ամբողջությամբ իրականացնել իր առջև դրված նպատակը և խնդիրները: Երեխաների նախկինում ձեռք բերված գիտելիքները օգնեցին իրագործել իրենց առջև դրված խնդիրները: Դաստիարակի կողմից տրվող առաջադրանքնորը հստակ էին, դրանց ստուգումը՝ հետևողական: Պարապմունքն ընթացավ ճիշտ կառուցվածքով: Ճիշտ և տեղին էր ընտրված դիդակտիկ նյութերը և այս ամենը նպաստում էին զարգացնելու ճանաչողական մոտիվացիան մաթեմատիկական և տեխնիկական կարողությունները՝ կատարելով պարզ մաթեմատիկական գործողություններ: Երեխաները կարողանում էին ազատ և ինքնուրույն գործել արտահայտել իրենց մտքերը: Ողջ պարապմունքի ընթացքում գտնվում էին ակտիվ վիճակում՝ դաստիարակի հարցերին տալով քերականորեն ճիշտ ձևակերպված նախադասություններով պատասխաններ:

Դաստիարակի կողմից հետազոտվող թեման շատ եմ կարևորում նախադարձականի կրթության մեջ, քանի որ այն իրականացնում է ուսումնասիրվող օբյեկտի բազմակողմանի քննության, երեխաների գիտելիքների համակարգված ձևավորման, շրջակա աշխարհի իմաստալից ընկալման, ստեղծագործական հետաքրքրությունների

ձևավորմանը: Տվյալ ուսումնական նյութի վերաբերյալ տրամադրվում են հարուստ տեղեկատվություն, ինչի շնորհիվ իրակացվում են մի շարք խնդիրներ՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև եղած կապը, ուսումնական տարբեր ոլորտները, փոխադարձ կապը: Ձևավորվում է համեմատելու, ընդհանրացնելու և եզրակացնելու կարողությունները:

Դիտարկում

Դաստիարակը պարապմունքի ընթացքում հասավ իր առջև դրված նպատակներին: Երեխաները կարողանում էին կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ, համեմատում էին, հետազոտում առարկաները: Կարողանում էին գտնել խնդրի լուծումը: Ցուցաբերում էին հետաքրքրություն թեմայի վերաբերյալ: Նկատվում էր զգայական գործընթացների առաջատարություն: Երեխաները սովորում էին մտածել գործողությունների միջոցով, իսկ այդ մտածական գործողությունների կիրառմանը դրդում էր դաստիարակը: Դաստիարակը կիրառեց մտագրոհ, աշխատանք ենթադրով մեթոդները, որոնք շատ արդյունավետ էին պարապմունքի համար: Երեխաներն առավել ակտիվ էին նկարչության ժամանակ, կարողանում էին հիմնական գույներից ստանալ բաղադրյալ գույներ, աշխատանքը կատարում էին սիրով և մեծ հետաքրքրությամբ: Աշխատանքներն ուղղված էին նախադարձական տարիքի երեխաների մաթեմատիկական և տեխնիկական կարողությունների, մշակութային կարողությունների զարգացմանը: Դաստիարակը միևնույն թեմայի շուրջ տարբեր գործունեությունների միջոցով իրականացրեց իր առջև դրված նպատակները: Երեխաներն ամբողջությամբ ներգրավված էին պարապմունքի մեջ, գտնվում էին ակտիվ դերում, պատասխանում էին իրենց ուղղված հարցերին՝ բավականին տրամաբանորեն կապակցված նախադասություններով:

Մանկապարտեզում ինտեգրված պարապմունքի կազմակերպումը շատ եմ կարևորում, քանի որ գործունեության այս ձևը պահանջում է ինքնուրույն մտածողություն, նախաձեռնություն, համագործակցություն, կարգապահություն շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում: Ինտեգրված պարապմունքները միտված են լուծելու մի շարք խնդիրներ: Ուսուցման այս ձևը մի շարք կապեր է

հաստատում առարկաների և երևույթների միջև: Ինտեգրումն օգնում է տվյալ թեմայի շուրջ ձեռք բերել հիմնական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

Դիտորդները եկան այն համոզման, որ ինտեգրված պարապմունքները շատ արդյունավետ են և նպատակային, որոնք լուծում են մի շարք կրթադաստիարակչական խնդիրներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հետազոտական աշխատանքի ավարտին եկա այն եզրահանգման , որ մանկապարտեզում ժամանակակից պահանջներին համապատասխան պարապմունքի կազմակերպումը նպաստում է պրակտիկ գործունեության կատարելագործմանը, որոնց օգնում են բովանդակալից մոտեցումը, նոր մեթոդների կիրառումը: Ինտեգրված պարապմունքի ընթացքում տարբեր մեթոդիկաների միջև կապերի բացահայտումը նպաստեց առարկաների և երևույթների ուսումնասիրությանը:

Այսպիսով, ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներից մեկին. կրթությունը պետք է լինի փոքր ծավալով, բայց տարողունակ:

Հետևաբար, ինտեգրված և համապարփակ պարապմունքում ապահովվում է երեխաների գործունեության տարբեր տեսակների առկայությունը՝ համատեղելով տարբեր ոլորտների գիտելիքները: Բայց այս տեսակի պարապմունքը զգալիորեն տարբերվում են միմյանցից, թեև երկուսն էլ հիմնված են միջառարկայական (միջառարկայական) կապերի վրա:

Հետագա աշխատանքների ընթացքում ցանկալի է, որ դաստիարակներն ինտեգրված պարապմունքներն պլանավորելիս և կազմակերպելիս ապահովեն հնարավորինս բարձր մոտիվացիա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2005
2. Ա.Հովհաննիսյան, Ս.Մարության «Պարտեզ» նախադպրոցական կրթական ծրագիր, Երևան 2008
3. В.И.Турченко Дошкольная педагогика Москва 2014
4. Н. Рыжова Развитие речи в детском саду. Конспекты занятий в младшей, средней и старшей группах Москва 2010г.